# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2016Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### *ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ*

2016թ. մարզի առողջապահական հաստատությունների զոբալ բյուջեն կազմում է 618 693,6 հազ. դրամ: Կատարողականը կազմում է 612 224,6 հազ. դրամ:

Մարզի հիվանդանոցային բժշկական օգնություն իրականացնող ընկերություններում կատարվել են 41612.8 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որից 4400.0 հազ. դրամը համավճարի հիմունքներով:

Մարզպետի կողմից պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել մարզի 36 քաղաքացիներ: Ապահովվել է հատուկ հիվանդություններով տառապող անձանց անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրումը, ինչպես նաև սոցիալական խմբերում ընդգրկված անձանց անվճար բուժ.ծառայություններ են մատուցվել մարզի բնակչությանը:

Մարզում իմունականխարգելման աշխատաքները պատվաստման տարբեր տեսակների գծով և նրանց ընդգրկվածությունը կազմում է 95%:

2016թ. «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ում սկսել է գործել հեմոդիալիզի բաժանմունքը, որը սպասարկում է մարզի 9 բնակչի:

Ավարտվել է <<Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ-ի նոր շենքի կառուցումը, որի համար ՀԲ-ի և ՀՀ կառավարության միջոցներից ներդրվել է շուրջ 65 մլն. դրամ:

2016թ. հունիսի 13-ից 25-ը իրականացվել է Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) և Ucom ընկերության կողմից համատեղ իրականացվող «Լույս հայի աչքերին» 2016 թվականի ծրագիրը: Մարզի բուժհաստատությունների ակնաբույժների կողմից 2016թ.-ին իրականացվել են շուրջ 1000 մեծահասակի և 810 երեխայի ակնային զննում: Ակնային զննում անցածներից 133-ը ծրագրի շրջանակում ենթարկվել են վիրահատության, իսկ 38-ը՝ լազերային միջամտության: ՀՀ Վայոց ձորի մարզպետի միջամտությամբ ծրագրի շրջանակում վիրահատության են ենթարկվել նաև մարզի սոցիալապես անապահով ընտանիքների 15 բնակիչ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

*Առողջապահության բնագավառում* 2016թ. կատարված աշխատանքների մասին

1. Բուժհիմնարկների թիվը — **8**
   - բժշկական կենտրոն — 1
   - բուժական միավորում — 1
   - առողջության կենտրոն — 1
   - Գյուղական բժշկական ամբուլատորիա — 1
   - առողջության առաջնային պահպանման կենտրոն — 4

2. **Ծնունդների թիվը**
   - **հիվանդանոցային** — **467, այդ թվում՝**
   - Եղեգնաձոր — 225
   - Վայք — 241
   - Ջերմուկ — 1
   - **ՋԱԳՍ-ի տվյալներով** — 625, **այդ թվում՝**
   - Եղեգնաձոր — 394
   - Վայք — 185
   - Ջերմուկ — 46

**5.Մահերի թիվը մարզում ՋԱԳՍ-ի տվյալներով** — **493, այդ թվում՝**
   Եղեգնաձոր — 322
   Վայք — 101
   Ջերմուկ — 70

**6.Գրանցված 0-5տարեկան երեխաների մահերի թիվը** — 1
   - տնային — 1
   - հիվանդանոցային — 0

**7. Մահճակալների թիվը** — **85այդ, թվում**

**Եղեգնաձորի բժշկական կենտրոն** — **45**
**Վայքի բուժմիավորում** — **35**
**Ջերմուկի առողջության կենտրոն** — **5**

**Առողջապահության և սցիալական ապահովության**

**վարչության պետ** — **Խ.Գևորգյան** — **12.01.2017թ.**